# Արձանագրություն N 2

**«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/82» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի**

ք. Երևան

22.04.2020թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Աբրահամյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Քալանդարյանը, Գ. Սաֆարյանը, Գ. Խարբությանը, Ա. Մնացականյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ներսիսյան

1. **«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/82» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 21.04.2020 թվականին և 22.04.2020 թվականին ներկայացված պարզաբանումներին պատասխանելու վերաբերյալ**

---

(Ռ. Աբրահամյան)

**Պարզաբանման պահանջի տեքստ՝ ուղարկված «Գոլդշին» ՍՊԸ-ի կողմից.**

Հարգելի պատվիրատու, չափաբաժին 1-ում, 2-ում և 3-ում թիթեղի հաստությունը կարող է լինել 0,5մմ, իսկ գույնը արտաքին կողմից կարող է լինել շոկոլադ (RAL 8017) գույնի և լաքապատ, իսկ հակառակ կողմում՝ շոկոլադ գույնի գռունտապատ:

**Տրամադրված պարզաբանման տեքստ՝ ուղարկված «Գոլդշին» ՍՊԸ-ին.**

Այո՛, հանձնաժողովը համաձայն է, որ չափաբաժին 1-ում, 2-ում և 3-ում նշված թիթեղի հաստությունը կարող է լինել 0,5մմ, իսկ գույնը արտաքին կողմից կարող է լինել շոկոլադ (RAL 8017) գույնի և լաքապատ, իսկ հակառակ կողմում՝ շոկոլադ գույնի գռունտապատ:

**Պարզաբանման պահանջի տեքստ՝ ուղարկված «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից.**

Պարզաբանում 1:

1-ից 4-րդ չափաբաժիններում թիթեղի հաստությունը նշված է 0.55 մմ: Տեղեկացնում եմ Ձեզ, որ Հայաստանում չկա կամ գրեթե չկա 0.55 մ հաստությամբ գունավոր ցինկապատ թիթեղ: Խնդրում եմ նշեք որքանով է սկզբունքային 0.55 մմ հաստությունը, քանի որ թիթեղի վաճառքի մեջ ներգրավված բոլոր տնտեսվարողները ներմուծում են 0.50 մմ հաստությամբ թիթեղ: Ենթադրում եմ արդյունքում որոշ ոչ բարեխիղճ տնտեսվարողներ կմատակարարեն 0.55 մմ-ի գնով 0.50 մմ հաստությամբ թիթեղ:

Պարզաբանում 2:

3-րդ չափաբաժնում «լայնությունը 0.20*0.20 մմ» կարծում եմ պետք է լինի «լայնությունը 200*200 մմ»

**Տրամադրված պարզաբանման տեքստ՝ ուղարկված «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ին.**

Պարզաբանում 1
1-ից 4-րդ չափաբաժիններում գունավոր ցինկապատ թիթեղի հաստությունը կարող է լինել 0.5 մմ, բայց ոչ դրանից պակաս:

Պարզաբանում 2
Ինչ վերաբերվում է 3-րդ չափաբաժնին, ապա տեղի է ունեցել վրիպակ: Պետք է լինի «լայնությունը՝ 200*200 մմ»:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ռ. Աբրահամյան |
| Անդամներ՝ | | Մ. Քալանդարյան |
| | | Գ. Սաֆարյան |
| | | Գ. Խարբության |
| | | Ա. Մնացականյան |
| Համակարգող՝ | | Ա. Ներսիսյան |